ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2022 թվականի N 396-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1521-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի «Գույք ամրացնելու մասին» N 1521-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշումը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով՝

«3.1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքն ամրացնել «Ստարտափ Արմենիա» հիմնադրամին՝ համաձայն N 4 հավելվածի։».

2) որոշման 4-րդ կետում «NN 1, 2 և 3» թվերը փոխարինել «NN 1, 2, 3 և 4» թվերով, իսկ «երկամյա» բառը՝ «քսանամյա» բառով.

3) որոշման N 3 հավելվածի ցանկում՝

ա. հանել 11-րդ, 12-րդ և 13-20-րդ կետերը,

բ. 30-րդ կետում «Մոնիթոր BENQ G 900 WA» բառերը փոխարինել «Մոնիթոր BENQ E» բառերով,

գ. 53-րդ կետում «Դիկտաֆոն OLIMPUSN8700» բառերը փոխարինել «Դիկտաֆոն Samsung» բառերով,

դ. 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«54.	Դիկտաֆոն շարժական SONYICD-UX512/B	1	53,010.00	53,010.00	0.00	19,500.00	19,500.00	0.00	0	30.12.2011»,

ե. լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 54.1-ին կետով՝

«54.1.	RCЛ	1	53,010.00	53,010.00	0.00	19,500.00	19,500.00	0.00	0	30.12.2011»,

զ. 57-րդ կետում «Ֆոտոխցիկ թվային Canon SX 110 IS» բառերը փոխարինել «Ֆոտոխցիկ թվային Samsung» բառերով,

է. 60-րդ կետում «Խոսափող Philips SBC MC 8650» բառերը փոխարինել «TOVASTE UHF PLL» բառերով,

ը. հանել «Ընդամենը» տողը.

4) որոշումը լրացնել N 4 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ